ԱՐԱՐԱՏՅԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ՀԵՐԱԿԱՐԴՈՒՄ ԷՐ ԿԱՊ

ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(15 Հունիսի, 1997)

«Լուսաւորեաց, լուսաւորեաց
«Աշխարհ Հայաստանեայց».
Զի հասեալ է լոյս քո
Եւ փառք Տեառն ի վերայ քո ծագեսցեն»:

Աստվածաշունչ Մատյանից (Եսայի Մարգարեից) քաղված և Երուսաղեմ հավերժական քաղաքին համար ասված այս բառերը ես այսօր իմ արյանս, իմ մտածմանս, իմ զգացմանս հետ խառնելով, կմատուցեմ մեր ժողովրդին Հայոց Եկեղեցվո և հայ ժողովրդի սրբազնագույն այս բեմից՝ Միածնաէջ այս տաճարից, աղոթելով առ Աստված ի գոհության և ի փառատրության:

«Լուսաւորուի՛ր, լուսաւորուի՛ր,
Աշխարհ Հայաստանեայց,
Որովհետև Քո լոյսը հասաւ,
Եւ Տիրոջ փառքը քո վրայ պիտի ծագի»:

Ի՜նչ խորունկ խոսքեր, սրտաթունդ բառեր բոլոր նրանց համար, ովքեր հոգևոր լսողություն ունեն, ներքին ընկալչություն ունեն բառերի միջից և բառերից անդին՝ Աստուծո իմաստությունը, շնորհքը, Սուրբ Հոգու զորությունը և մեր ժողովրդի երջանկությունը կարենալ ըմբռնելու համար:

Այսօր, առաջին անգամը լինելով Մեր Ընդհանրական Կաթողիկոսության այս շրջանին, Մենք եպիսկոպոսական ձեռնադրություն կատարեցինք այս բեմի վրա, ուր յոթը տարիներից ի վեր տեղի չէր ունեցել եպիսկոպոսական ձեռնադրության և օծման արարողություն: Փառք եմ տալիս Աստուծո, որ ինձ այս շնորհքը ըրավ, և ես կարողացա այսօր ինձ տրված իշխանությամբը եպիսկոպոսական բարձրագույն աստիճանի պատասխանատվության կանչել և այդ պատասխանատվության համար խորհրդական նվիրագործմամբ ձեռնադրել և օծել վեց ընծայյալ անդամները մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միաբանությունից:

Այսօր Աստուծո շնորհքը, Սուրբ Հոգու ներգործությունը հոգեսույզ աղոթքների միջից թող իջնի ամբողջ Հայաստան աշխարհի վրա և մեր հոգիների միջից, որոնց հպեց այդ Հոգու շնորհը, թող տարածվի Աստուծո շունչը այն երկրին մեջ, որ այդ շնչին միջով ապրեց ավելի քան տասնյոթը դարեր շարունակ:

***

Եպիսկոպոսական ձեռնադրությունը մեր Եկեղեցու արարողական, խորհրդական աստվածպաշտության ամենից բարձր պահերից մեկն է: Եպիսկոպոսությունը

լրումն է եկեղեցական իշխանության: Երեք գլխավոր, էական աստիճաններ կան եկեղեցու նվիրապետական հեղինակության և համակարգի մեջ. *սարկավագական աստիճան, քահանայական աստիճան* և *եպիսկոպոսական աստիճան*: Այս երեք իշխանություններից կրաղկանա ամբողջ հեղինակությունը Հայ Եկեղեցու, որուն գլուխն է Կաթողիկոսը:

Այսոր այն բարձրագույն իշխանությունը, որ տրվեցավ ձեգի, մեր «Մաշտոց»-ի սրբազան աղոթքներով և հոգևոր տվչությամբ «քահանայապետություն» է: «Եպիսկոպոս» բառը, իբրև հունարեն բառ, կնշանակի *վերադիտող*: Մեկ հատուկ աշխարհական շրջանի, մեր Հայաստան աշխարհի կամ մեր Հայ Եկեղեցու ծառայության դաշտի մեկ մասնավոր շրջանի վերին պատասխանատուն են ձեզնից յուրաքանչյուրը:

Ուզում եմ ձեզ հիշեցնել, որ այդ իշխանությունը աթոռի իշխանություն չէ, անունի իշխանություն չէ, հանգամանքի իշխանություն չէ, *ծառայությա՛ն իշխանություն* է: Հիսուս ըսավ. «*Թագաւորք ազգաց տիրեն նոցա, և որ իշխենն նոցա՝ բարերարք կոչեն: Այլ դուք ոչ այնպէս, այլ որ մեծն է ի ձեզ՝ եղիցի իբրև զկրտսերն, և առաջնորդն՝ իբրև զսպասաւորն*» (ՂՈՒԿ. ԻԲ 25-26): Ժողովուրդը ասում էր Հիսուսի մասին. «*Ի՞նչ հեղինակությամբ է նա խոսում, ո՛չ դպիր է, ո՛չ քահանայապետ է, ո՛չ սինեդրոնի անդամ է. Եբրայական ժողովրդի պաշտոնական իշխանության մեջ աթոռ չունի, թափառաշրջիկ մի վարդապետ է, ի՞նչ իշխանություն ունի*»: Ինքն էր, Հիսուս, Իր իշխանությունը, Իր հոգիին մաքրությունը, Իր խոսքի ճշմարտությունը, Իր կյանքի բյուրեղությունը, Իր Աստվածայինով թափանցված կյանքին տարածումը ժողովրդին կյանքին մեջ: Բուն իշխանությունը անձից պիտի բխի և ոչ թե աթոռից կամ ուրիշ տեսակի արտաքին հանգամանքներից: Ա՛յս է վավերական իշխանությունը: Որքան ծառայեք, այնքան իշխանություն կվայելեք: Որքան խոնարհ լինեք, այնքան մեծ կդառնաք, որքան ժողովրդանվեր լինեք, այնքան ավելի ժողովրդահարգ կհանդիսանաք: Այս է եպիսկոպոսության իսկական մեծությունը, ինչպես որ աղոթքի մեջ ասվեց՝ «*խոնարհութեան մէջ գտէք մեր մեծութիւնը*»:

***

Սիրելինե՛ր, այս պահը մեր Մայր Աթոռի վերջին շրջանի պատմության մեջ կարևորագույն օրերից մեկն է: Եպիսկոպոսական ձեռնադրությունը կամ օծումը սովորական արարողություն չէ՝ ամեն կիրակի կամ ամեն տարի կատարվող: Եպիսկոպոսական իշխանությունը իր իսկությանը մեջ կվերաբերվի ժողովրդի *հովվական* ծառայությանը:

Մենք, մի տարի առաջ, ծանոթանալուց հետո մեր հայրենի աշխարհի և ժողովրդի եկեղեցական-հոգևոր կյանքին և կարիքներին, հետ խորհրդակցության Գերագույն Հոգևոր Խորհուրդի ժողովին, հարմար դատեցինք, որ ստեղծվեն հինգ նոր թեմեր մեր Հայաստան աշխարհի մեջ՝ *Արմավիրի, Գուգարաց, Արագածոտնի, Գեղարքունյաց և Կոտայքի* թեմերը: Եվ ստեղծվեցին այդ նոր թեմերը Մեր հատուկ Հայրապետական գրերով: Այդ թեմերի համար Մենք նշանակեցինք առաջնորդներ, որոնցից ոմանք ունեին վարդապետական աստիճան: Մեկ տարի անցավ, նրանք իրենց աշխատունակ գործունեությամբ, ժողովրդի մեջ ունեցած

ծառայության բարիքներով ունեցան այն արժանիքը, որ իրենց ժողովուրդը, Թեմական Խորհուրդների միջոցով ճանաչեց նրանց և Մեզ դիմում կատարեց, որ Մենք նրանց շնորհենք եպիսկոպոսական աստիճան: Հետ քննության՝ մենք ընդառաջ գնացինք և այսօր ահավասիկ մեր նորակազմ թեմերից՝ Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Նավասարդ վարդապետը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ վարդապետը, Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել վարդապետը բարձրացրինք եպիսկոպոսական աստիճանին՝ Սյունյաց և Վայոց մարզերի առաջնորդ Տ. Աբրահամ վարդապետի հետ միասին:

Իսկ անցնող Հունվար ամսուն, մեր Եկեղեցու ծառայությունները մեր ժողովրդին առավել ուժգնությամբ, առավել արդյունավորությամբ մատուցելու նախանձախնդրությունից մղված, *Ուկրաինայի* և *Հարավային Ռուսաստանի* (Կրասնոդարի, Սոչիի և ուրիշ շրջանների) առաջնորդական փոխանորդությունները հատուկ կոնդակով հռչակեցինք ինքնուրույն, առանձին թեմեր և ահա այսօր նրանց առաջնորդական փոխանորդներին՝ Տ. Նաթան և Տ. Եզնիկ Ծ. վարդապետներին բարձրացրինք եպիսկոպոսական աստիճանի:

***

Այսօր ես զգում եմ, որ մի դեպք է պատահում, որ մեր Հայաստանի անկախ Հանրապետության այս նոր շրջանին առաջին եպիսկոպոսական ձեռնադրությունն է, որ կատարվում է: Գիտցեք պատիվը այս դեպքին: «*Լուսաւորեա՛ց, լուսաւորեա՛ց, աշխարհ Հայաստանեայց, զի հասեալ է լոյս քո*»: Լույսը իջա՛վ մեր երկրին, ազատության և անկախության լույսը: Բայց ժողովուրդը ամեն տեղ պետք ունի քրիստոնեական հավատքի ուսուցման, իր հայրերի հավատքի ճանաչման, իր եկեղեցական կյանքի լրիվ գործադրման, հոգեկան մաքրության, բարոյական ամրության և առողջության համար:

Աստված հրեշտակներ չի ղրկեր երկնքից, որ մարդոց համար ծառայեն: Աստված մարդիկներեն մարդիկ կընտրե, որ հրեշտակների պես ծառայեն: Դուք այսօր այդ ընտրվածներից եք, վեց ընտրված անձեր մեր Մայր Աթոռի Միաբանությունից, որ կոչված եք որպես այս նոր Հայաստանին համար դառնալու հոգևոր շունչ, ժողովրդական նվիրում, ամբողջական ինքնամատուցում: Ուրիշ լույս չունինք: Ո՛չ մեզ փողը կփրկի և ո՛չ ալ ուրիշ տեսակի նյութական առավելություն: Մեր ներքին բարոյական կերպարն է, որ մարդը կկերտի: Եվ ազգերն ալ, առանց բարոյական տոկունության, չեն դիմանար: Այս է, որ մենք կոչված ենք, իբրև առաքելություն, մեր ժողովուրդին կատարելու, մատուցելու:

***

Այսօր ես կուզեի իմ գնահատանքը հայտնել մեր Հանրապետության ղեկավարությանը, որ ճանաչելով այդ իրողությունը, որ այս հանրապետության շրջանի առաջին ձեռնադրությունն է, որ կկատարվի, Վսեմաշուք Նախագահը իր ներկայացուցիչը ուղարկեց, որ մեր Հայաստանի Հանրապետության Նախագահությունը բերի իր մասնակցությունը այս հոգևոր ցնծության, այս հոգևոր վերարթնության, վերածաղկումի մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար:

Իմ գնահատանքն եմ հայտնում նաև մեր Հանրապետության բոլոր մարզերի պետերին՝ մարզպետներին, քաղաքապետներին, ովքեր եկան և իրենց շրջանների հոգևոր առաջնորդների այս եպիսկոպոսական օծմանը անձամբ իրենց մասնակցությունը բերին, որպեսզի ժողովուրդը իմանա, թե քաղաքական-պետական սպասավորը և եկեղեցական-հոգևոր սպասավորը միասնաբար պիտի տանին այս ժողովրդի առաջնորդության, ղեկավարման գործը, դեպի բարձրություն, զարգացում երթալու ճանապարհին իրև անհակտելի լծակիցներ և գործակիցներ:

Ես կուզեմայի նաև իմ գնահատանքը հայտնել Ռուսաստանի Դաշնային Պետության մեր սիրելի դեսպանին, որ եկավ անձամբ մեր հրավերին ընդառաջելով և Հարավային Ռուսաստանի առաջնորդին ծեռնադրությանը բերավ իր խնդակցությունը: Նույն գնահատանքը և շնորհակալությունները հայտնում եմ Ուկրաինայի մեր սիրելի դեսպանին, որ ինքն ալ եկավ և հանուն Ուկրաինայի ժողովրդի և պետությանը, ասել ուզեց մեզ, որ մենք ձեզի հետ ենք, և մենք՝ երկու ժողովուրդներս, միշտ կապված ենք իրարու այս տարածաշրջանին մեջ և պիտի գործակցության, եղբայրական լծակցության միջից առաջ տանենք այս նոր կյանքի ընթացքը մեր բոլոր երկրների և ժողովուրդների պատմության հոգևոր և քաղաքական, կա՛մ տնտեսական, կա՛մ ընկերային բոլոր այլ մարզերին մեջ:

Ես այսօր իմ խոր ուրախությունն եմ հայտնում մեր սիրեցյալ հոգևոր եղբայրներին, Մայր Աթոռի միաբանությանը, եպիսկոպոսաց դասին, վարդապետաց դասին, Հոգևոր ՀԵմարանին, Մայր Աթոռի բոլոր թեմերին անխտիր, որովհետև տեսնում եմ, որ օրից-օր, հարության շնչին պես, զարնան շնչին պես մի հով է անցնում մեր կյանքերի միջից, վերանորոգության շունչը, վերաշխուժացման ոգին, վերաբարեկարգության հովը և ասիկա Աստծուց կգա, մենք գիտնանք մենք զմեզ բանալ այդ նոր շրջանին:

Սիրելի երիտասարդներ, ձեր ավագ եղբայրները, որ այսօր այս բեմին վրա շարված են, մի գեղեցիկ տեսարան պարզելու համար չէ, որ կանգնել են այստեղ, թիվը ավելցնելու համար չէ, նվիրումի դաս դառնալու համար է: Նրանք իրենք իրենց ընծայում են մեր ժողովրդին: Եվ դուք՝ Հոգևոր ՀԵմարանի սաներ, հրամեցե՛ք, ժողովուրդը ձեզ է սպասում, Աստված է՝ ձեզ ուղարկում: Եթե այս օրերին, ազատության և անկախության այս շրջանին, մեր Եկեղեցին չվերածաղկի, մենք ենք հանցավորը, ուրիշները մի՛ մեղադրեք: Ընդառաջ գնալ Աստուծո կոչին և ժողովուրդի կարիքին, սրանից ավելի ի՞նչ մեծ պատիվ մարդ կարող է երևակայել:

Այս ծեռնադրությունը թող լինի խմոր մեր բոլորի համար: Ամեն անգամ, սիրելի հավատացյալներ, երբ ես ծեռնադրություն եմ կատարում, ես, կարծեք թե, վերստին եմ ծեռնադրվում: Ամեն անգամ վերանորոգվում է իմ մեջ Աստուծո ներգործության գաղափարը: Ամեն ծեռնադրություն ինձ համար մի հայելի է: Այդ հայելու մեջ եմ տեսնում, արդյոք ես արժանի և հավատարիմ գտնվե՞լ եմ Աստծուն:

Ձեռնադրության այդ աղոթքների մեջ նայեցեք: Ո՞ւր են ձեր հոգիները և մաքրեցեք այդ հոգիները, զորացուցեք այդ հոգիները և գնացեք ժողովրդին Քրիստոսի նման: Աստված եթե եկավ ու խոնարհեցավ ու մարդ դարձավ, աղքատին գնաց, հիվանդին բժշկեց, մենք խոնարհ լինենք՝ ժողովրդին ծառայելով: Մի օր որ կորցնենք, անցկացնենք դատարկ, Աստուծո դեմ մեղանչում է դա, որովհետև ամեն

մի օրը Աստուծո համար և մեր ժողովրդի համար բարիքի օր է, որ մեր միջոցով Աստված կգործի, եթե մենք գիտնանք Աստուծո ձեռքերի մեջ գործիք դառնալ: Տիեզերքն ու մարդկությունը Աստուծո ձեռագործն են, և մենք Աստուծո ձեռքին մատներն ենք: Աստված մեզ է ընտրել և ուղարկել Իր գործին: Թող վերանորոգվի ձեր մեջ այն գիտակցությունը, որ եթե մինչև այսօր մեկ էիք անում, այսօր տասնապատիկ պիտի անեք: Պաշտոնի բարձրացումը պատվի բարձրացում չէ, պարտավորության բարձրացում է, պարտավորության զարգացում է:

Այս պահին ես իմ սիրո հայրապետական խոսքն եմ ուղղում ձեր թեմերի բոլոր թեմական իշխանությանց և հավատացյալ ժողովրդին: Երբ գնաք այնտեղ նոր եկեղեցիներ օծելու, քահանաներ ձեռնադրելու, քարոզներ տալու, բոլորին փոխանցեցեք մեր սիրո ողջույնը: Մենք ձեզի հետ ենք այնքան ատեն, որքան Աստված մեզի շունչ կուտա և կյանք կուտա այս Մայր Աթոռին մեջ:

Զորացնենք մեր սիրտն ու կամքը, ամրացնենք մեր գործունեության ներդաշնակությունը, գիտնանք հարգել հեղինակությունը և նրա միջով տեսնել մեր մեծությունը և մեր հաջողությունը: Այս է եպիսկոպոսության հարազատ և օգտակարագույն ուղին: Այդ ճանապարհով քայլեք, որպեսզի ձեր ժողովուրդը տանիք ի *«վայրի դալարուղ և առ ջուրս հանգստեան»*, ինչպես ասում է սաղմոսերգու Դավիթ մարգարե արքան:

***

Իսկ դուք, սիրելի ժողովուրդ, հոգևորապես այս օրը դարձուցեք ձեր կյանքի մեջ մի տեսակ խմոր: Խմորեցեք ձեր վյուս օրերը այսօրվան խմորովը, Աստուծո ներշնչումովը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունը, այս երիտասարդ եպիսկոպոսների և գալիք վարդապետների շունչը թող տարածվի մեր ժողովրդին մեջ, գործակցեցեք այս եպիսկոպոսների հետ: Միասին աշխատենք, ի սեր մեր ազգի նոր վերականգնումին, նոր վերածննդին: Պատմաբանները ապագային ինչ կկոչեն այս շրջանը, չգիտեմ, բայց ես զգում եմ, եթե սխալվում եմ, թող Աստված ների, *վերածննդյան շրջան* ենք ապրում, վերածնվե՛նք, վերափոխվե՛նք, բյուրեղանա՛նք, ընդունենք, որ փոխվելու մեջ պատիվ կա, ոչ ամոթ: Փոխվիլը դեպի լավը պատիվ է, որուն կըսեն *բարեփոխություն*: Այդ ճանապարհով եկեք գնանք և շնորհավորենք մեր սիրելի նորաօծ եպիսկոպոսներին և իրենց ժողովուրդին ուղղենք մեր սիրո և հայրապետական խնամատարության ամենախոր և սրտագին, անկեղծագույն մաղթանքը և միասին ասենք.

«Լուսաւորեա՛ց, լուսաւորեա՛ց
Աշխարհ Հայաստանեայց,
Զի հասեալ է լոյս քո
եւ փառք Տեառն ի վերայ քո ծագեսցեն»:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

15 Հունիս 1997